Հավելված N 1
ՀՀ Լոռու մարզի Թումանյն համայնքի ղեկավարի
2025թվականի օգոստոսի 29 -ի թիվ 297-Ա որոշման

ԿԱՐԳ
ԹԱՂՄԱՆ ԵՎ ԴԻԱԿԻՋՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) գերեզմանատան կամ աճյունասափորը սահմաններում տրամադրված գերեզմանատեղում հողին հանձնելու (թաղելու), հուշապատի մեջ տեղադրելու կամ դիակիզելու հետ կապված գործողությունները:
2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝
գերեզմանատան տնօրինություն՝ համայնքի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի, կամ համայնքի ղեկավարի (Երևանում՝ Երևանի քաղաքապետի) կողմից ստեղծված հուղարկավորության կազմակերպման համար օրենքով նախատեսված ոչ առևտրային կազմակերպություն, իսկ պետական գերեզմանատների դեպքում՝ լիազորված պետական մարմինը, իսկ մասնավոր գերեզմանատների դեպքում՝ գերեզմանատունը շահագործողը
կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այլ անձը.դիակիզարան՝ մահացածի մարմինը դիակիզելու համար հատուկ վառարաններով, հանգուցյալի հետ հրաժեշտի ծիսակատարման սրահով, դիակների աճյունասափոր՝ չքայքայվող նյութից (մետաղյա կամ պլաստիկ) պատրաստված կափարիչի հերմետիկությունն ապահովող սրվակ (տրամագիծը՝ 0,15 մ, երկարությունը՝ 0,20 մ), որտեղ տեղադրվում է մահացածի մարմնի դիակիզումից հետո ստացված մոխիրը.հուշապատ՝ աճյունասափորների տեղադրման համար հատուկ կառուցված պատ:
3. Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորությունն իրականացվում է մահվան վկայականի հիման վրա:
4. Մահացածի հուղարկավորման համար գերեզմանատան, տեղի և տեսակի ընտրության, գերեզմանատեղի տրամադրման հարցերը կարգավորվում են օրենքով և սույն որոշմամբ սահմանված կարգով՝ հաշվի առնելով անձի կենդանության օրոք իր հուղարկավորության պայմանների վերաբերյալ նոտարական կարգով վավերացված նրա կամքի գրավոր արտահայտությունը:
5. Մահացածի մարմինը (աճյունը) հողին հանձնելու համար համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով դիմողին (հետագայում՝ գերեզման օգտագործողին) մեկ գերեզմանատեղի համար տրամադրվում է 2.5 քառ. մետր հողատարածք (2.5x1.0 մետր չափերով), իսկ ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար՝ առավելագույնը 12,5 քառ. մետր հողատարածք (2.5x5 մետր չափերով):
6. Աճյունասափորը (մահացածի մարմնի դիակիզումից հետո) հողին հանձնելու դեպքում համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով մեկ գերեզմանատեղի համար տրամադրվում է 1.0 քառ. մետր հողատարածք (1.0x1.0 մետր չափերով), կամ աճյունասափորը տեղադրվում է հուշապատի մեջ:
7. Մահացածի հուղարկավորության կազմակերպումն ստանձնողը գերեզմանատան տնօրինությանը ներկայացնում է մահվան վկայականը և առաջարկություն հուղարկավորության տեղի ու տեսակի (հողին հանձնում կամ դիակիզում) վերաբերյալ:
8. Գերեզմանատան տնօրինությունը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի կամ գերեզման օգտագործողի հետ համատեղ որոշում է հուղարկավորության տեղը, ինչպես նաև օրը և ժամը: Հանգուցյալի թաղումը կատարվում է մահվան պահից ոչ շուտ, քան 24 ժամ հետո:
9. Գերեզմանատան տնօրինությունը մահվան վկայականի հիման վրա համապատասխան գրանցում է կատարում թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանում և գերեզման օգտագործողին տալիս է գերեզմանի վկայական:
10. Ընտանեկան գերեզմանի առկայության դեպքում գերեզմանատեղը հատկացվում է այդ գերեզմանի տարածքում նախկինում տրված գերեզմանի վկայականի հիման վրա, որում կատարվում են համապատասխան գրանցումներ: Նշված գերեզմանի վկայականի բացակայության դեպքում գերեզման օգտագործողին տրվում է գերեզմանի նոր վկայական:
11. Նոր գերեզմանը հատկացվում է օրենքով սահմանված կարգով և չափերով՝ գերեզմանատան հողերի օգտագործման հաստատված հատակագծով (սխեմայով) նախատեսված հերթականությամբ: Գերեզմանատան տնօրինության ներկայացուցիչը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի կամ գերեզման օգտագործողի հետ համատեղ տեղում սահմանասյուներով նշում է գերեզմանի սահմանները:
12. Գերեզմանատան տնօրինությունը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին ներկայացնում է իր կողմից կատարվող՝ մահացածին հողին հանձնելու, դիակիզման նախապատրաստական աշխատանքների (գերեզմանի փորում, թաղման կազմակերպում, գերեզմանի կարգավորում, դիատար և այլ ավտոմեքենաների տրամադրում, դիակիզում) և մատուցվող այլ վճարովի ծառայությունների ցանկը: Նշված ծառայություններից օգտվելը կամավոր է:

13. Սույն կարգի 12-րդ կետում նշված՝ մատուցվող վճարովի ծառայությունների ցանկը հաստատում է համայնքի ղեկավարը (Երևանում՝ Երևանի քաղաքապետը), իսկ մասնավոր գերեզմանատան դեպքում՝ այդ գերեզմանատունը շահագործող անձը:
14. Աճյունասափորը հանձնվում է հողին կամ տեղադրվում է հուշապատի մեջ՝ դիակիզարանի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:
15. Մահացածի հետ հրաժեշտի և հուղարկավորության ծիսակատարությունը կարող է իրականացվել ազգային և կրոնական ավանդույթի համաձայն:
16. Հուղարկավորության ավարտից հետո գերեզմանատան տնօրինությունը գերեզմանի վրա տեղադրում է մետաղյա ցուցանակ, իսկ աճյունասափորը հուշապատի մեջ տեղադրելու դեպքում փակվում է սալաքարով, որոնց վրա նշվում են հանգուցյալի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան ու մահվան տարեթվերը և գերեզմանատեղի (աճյունասափորի) հաշվառման համարը: Մետաղյա ցուցատախտակը և աճյունասափորի սալաքարը պատրաստվում և տեղադրվում են գերեզմանատան տնօրինության միջոցների հաշվին:
17. Հուղարկավորությունը դիակիզման միջոցով կամավոր է: Այն իրականացնելու համար հուղարկավորության կազմակերպումն ստանձնողը գրավոր դիմում է դիակիզարանի տնօրինությանը՝ ներկայացնելով մահվան վկայականը:
18. Դիակիզարանի պատասխանատու անձը դիակիզման մատյանում կատարում է դիակիզման օրվա ու ժամի վերաբերյալ գրանցում և հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի պատվերով կազմակերպում է մահացածի մարմնի ընդունումը, հրաժեշտի ծիսակատարությունն ու դիակիզումը: Աճյունասափորը հանձնվում է հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին կամ, նրա բացակայության դեպքում, հարազատներից որևէ մեկին՝ դիակիզումից հետո մեկ օրվա ընթացքում:
18.1. Մասնավոր գերեզմանատներում գերեզմանատան շահագործողն ինքնուրույն է կազմակերպում հուղարկավորության ծառայությունների մատուցումը՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա: Հուղարկավորության հետ կապված ծառայությունների ամբողջական ծավալը, այդ թվում՝ նաև հուղարկավորությունը դիակիզման միջոցով իրականացնելը որոշվում է պայմանագրով՝ կողմերի նախնական համաձայնությամբ:
19. Մահացածի հարազատների, ազգականների և այլ անձանց կողմից հուղարկավորության կազմակերպումից հրաժարվելու կամ, նրանց բացակայության դեպքում, մահացածի հուղարկավորությունն ստանձնում է քաղաքացու վերջին մշտական բնակության վայրի համայնքի ղեկավարը:
20. Ազատազրկման վայրերում, բուժհաստատություններում, ծերանոցներում և մանկատներում մահացած անձանց հուղարկավորությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:
21. Ինքնությունը չպարզված անձի հուղարկավորությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմինների համաձայնությամբ՝ քաղաքացիական գերեզմանատներում հատուկ հատկացված տեղերում: Ինքնությունը չպարզված անձի դիակիզումն արգելվում է՝ բացառությամբ սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքերի:
22. Գերեզման օգտագործողի պահանջով գերեզմանատան տնօրինությունն անվճար տալիս է տեղեկանք մահացածին Հայաստանի Հանրապետությունում հուղարկավորելու մասին, որտեղ նշվում է՝
1) մահացածի անունը, հայրանունը, ազգանունը.
2) մահացածի ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և մահվան օրը, ամիսը, տարեթիվը.
3) մահվան վկայականի համարը.
4) տվյալ գերեզմանատան թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանում գրանցման հերթական համարը, օրը, ամիսը, տարեթիվը.
5) տեղեկանքի հերթական համարը, տեղեկանքը տրամադրելու օրը, ամիսը, տարեթիվը:
Տեղեկանքը տրվում է այդպիսի պահանջ (դիմում) ներկայացնելուց հետո՝ անմիջապես:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Լոռու մարզի Թումանյն համայնքի ղեկավարի
2025թվականի օգոստոսի 29 -ի թիվ 297-Ա որոշման

ԿԱՐԳ
ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐՈՒՄ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են գերեզման օգտագործողի անվամբ գերեզմանատներում գերեզմանատեղերի (գերեզմանների) հաշվառման և հուղարկավորությունների կարգը:
2. Գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառումը և հուղարկավորությունների գրանցումն իրականացվում է գերեզմանատներում թաղումների և գերեզմանատեղերի հաշվառման ու հուղարկավորությունների գրանցման՝ յուրաքանչյուրը իր մասով, դրա համար նախատեսված մատյանում համապատասխան գրառում կատարելու միջոցով:
Յուրաքանչյուր գերեզմանատան համար համապատասխան մատյանները վարում են գերեզմանատների կառավարիչները կամ նրանց կողմից լիազորված պատասխանատու անձը (կազմակերպությունը):
2.1. Գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման մատյանների տիպային ձևերը հաստատվում են պետական լիազորված մարմնի կողմից:
3. Մատյանի թերթերը համարակալվում են, կարվում և կնքվում սույն կարգի 2-րդ կետում նշված մարմինների կողմից:
4. Մատյանում գրանցվում են՝
ա) գրանցման հերթական համարը, տարեթիվը, ամսաթիվը, ամիսը,
բ) մահացածի անունը, հայրանունը, ազգանունը,
գ) մահացածի ծննդյան և մահվան տարեթվերը, ամսաթվերը և ամիսները,
դ) մահվան վկայականի համարը, մահը գրանցող մարմնի անվանումը, գրանցման տարեթիվը, ամսաթիվը, ամիսը,
ե) մահացածի վերջին բնակության վայրը,
զ) գերեզմանի վկայականի համարը, գերեզմանի տեղը (ծառուղի, հատված, շարք), իսկ եթե հուղարկավորությունն իրականացվելու է աճյունասափորը հուշապատի մեջ տեղադրելու արարողությամբ, ապա նշվում է հուշապատի գտնվելու տեղը և աճյունասափորը տեղադրելու մոտավոր տեղը, իսկ այդ տեղերի համարակալված լինելու դեպքում՝ նաև համապատասխան համարը,
է) գերեզմանի մակերեսը (քառ. մետր)՝ ընդամենը,
ը) գերեզման օգտագործողի անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի համարը և մահացածի հետ ազգակցական կապը,
թ) տվյալ գերեզմանում թաղվածների թիվը,
ժ) այլ նշումներ (հուղարկավորության կազմակերպումն ստանձնած անձի անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի համարը, մահացածի հետ կապը և այլն):
5. Մատյանի համապատասխան սյունակներում ստորագրում են գերեզմանի վկայականն ստացողը և գրանցում կատարող պատասխանատու անձը:
6. Մատյանում ուղղումներ և ջնջումներ կատարելն արգելվում է: Անհրաժեշտության դեպքում՝ կատարված ուղղումները կամ ջնջումները վավերացվում են գրանցման մատյանը վարող պատասխանատու անձի ստորագրությամբ:
7. Մատյանները պահվում են անժամկետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Լոռու մարզի Թումանյն համայնքի ղեկավարի
2025թվականի օգոստոսի 29 -ի թիվ 297-Ա որոշման

ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆ N _____

Գերեզմանատուն _____,
ծառուղի _____, հատված _____, շարք _____,
Հողատարածքի չափերը՝_____ մ,
Հողատարածքի մակերեսը՝ ընդամենը՝_____ քառ. մ,
Հուշապատ _____
Գերեզման օգտագործող _____
(անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրային տվյալները)
_____
_____
_____,
Ազգակցական կապը _____

_____ _____ 200 թ.

ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

h/h	Թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանում գրանցման համարը տարեթիվը,ամսաթիվը, ամիսը	Հանգուցյալի անունը, հայրանունը, ազգանունը	Ծննդյան տարեթիվը ամսաթիվը ամիսը	Մահվան տարեթիվը ամսաթիվը ամիսը	Մահվան վկայականի համարը	Հուղարկա- վորության տեսակը (հողի ն հանձնում, դիակիզում)	Գրանցում կատարող պատասխանատու անձի ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի
2025թվականի օգոստոսի 29 -ի թիվ 297-Ա որոշման

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Սույն ընդհանուր կանոններով սահմանվում են գերեզմանատների բարեկարգման, պահպանման ու շահագործման (այսուհետ՝ շահագործում) ընդհանուր կանոնները:
2. Գերեզմանատները շահագործվում են համայնքների բյուջեի միջոցների հաշվին:
3. Գերեզմանատների շահագործումն ապահովում է համայնքի ղեկավարը կամ նրա կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպությունը:
4. Պետական լիազոր մարմինը գերեզմանատների շահագործման և հուղարկավորությունների կազմակերպման բնագավառում իրականացնում է օրենքով իրեն վերապահված լիազորությունները:
5. Գերեզմանատները կազմավորվում են տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ՝ ըստ գտնվելու բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծերի, հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների հիման վրա՝ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխան:
6. Գերեզմանատներն տեղադրվում են բնակելի տներից, դպրոցներից, նախադպրոցական, առողջապահական և հասարակական այլ շենքերից ու հանգստի գոտիներից առնվազն 300 մետր հեռավորության վրա:
7. Համայնքներում նոր գերեզմանատների կազմակերպման, գործող գերեզմանատների ընդլայնման համար հողատարածքները տրամադրվում և նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
8. Գերեզմանատները նախագծվում են դրանց համար հատկացված տարածքների ինժեներաերկրաբանական հետազոտությունների նյութերի փորձաքննության դրական եզրակացության հիման վրա:
9. Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար համայնքի ղեկավարը հաստատում է գերեզմանատների հողերի օգտագործման հատակագիծը (սխեման), որում նախատեսվում են՝
ա) գերեզմանատան զբաղեցրած հողատարածքի սահմանները,
բ) գերեզմանատան սանիտարապաշտպանիչ գոտին՝ պարսպից (ցանկապատից) առնվազն 10 մետր հեռավորությամբ,
գ) օրենքով սահմանված չափերով գերեզմանների հատկացման համար տեղամասերը (ծառուղիները, հատվածները, շարքերը) և դրանց օգտագործման հերթականությունը՝ առանձնացնելով ընտանեկան գերեզմանների, անհատական գերեզմանատեղերի (մեկ անձի) և պատմամշակութային տեղամասերը,
դ) ճանապարհների ու շավիղների տեղադրությունը, որոնց ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի գերեզմանատան ընդհանուր տարածքի 15 տոկոսը,
ե) կանաչապատման տեղամասերը չպետք է գերազանցեն գերեզմանատան ընդհանուր տարածքի առնվազն 20 տոկոսը,
զ) գերեզմանատան շահագործման և գերեզմանատնից օգտվելու համար անհրաժեշտ շինությունները, ենթակառուցվածքները՝ ելնելով տեղական պայմաններից (ավտոկայանատեղ, ոռոգման համակարգ, խմելու ջրի ծորակ, հասարակական զուգարան, պարիսպ (ցանկապատ):
10. Ընտանեկան գերեզմանների սահմանների միջև տարածությունը պետք է լինի առնվազն 0,5 մետր: Ընտանեկան գերեզմաններում գերեզմանատեղերի և անհատական գերեզմանատեղերի միջև տարածությունը պետք է լինի 1,0 մետր երկարությամբ ու առնվազն 0.5 մետր լայնությամբ:
11. Գերեզմանահորի խորությունը պետք է լինի առնվազն 1,5 մետր: գերեզմանահորի հատակն ստորգետնյա ջրերի մակարդակից պետք է առնվազն 2,5 մետր բարձր լինի:
12. Մահացածի աճյունը գերեզմանահորում տեղադրելուց հետո գերեզմանը ծածկվում է 0.5 մետր բարձրությամբ հողաթմբով, որի եզրերը պետք է լինեն գերեզմանահորի չափերից ավելին՝ գերեզմանահորը մակերևութային ջրերի թափանցումից պաշտպանելու նպատակով:
13. Գերեզմանատան մուտքի մոտ տեղադրվում են գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները:
14. Գերեզմանատան տնօրինությունն ապահովում է գերեզմանատան տարածքի մաքրությունը և կազմակերպում աղբահանությունը:
15. Գերեզմանատան տարածքը պետք է ապահովված լինի մակերևութային ջրերի հեռացման համակարգով:
16. Գերեզմանատան հողատարածքներում, այդ թվում՝ սանիտարապաշտպանիչ գոտում արգելվում են դրանց նպատակային և գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն, ինչպես նաև պտղատու ծառերի ու թփերի տնկումը:
17. Գերեզմանատանը հարակից տարածքներում գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողատարածքները պետք է լինեն գերեզմաններից առնվազն 40 մետր հեռավորության վրա:
18. Գերեզմանատան տարածքում արգելվում է բնակավայրերի խմելու և տնտեսական ջրամատակարարման ու ջրահեռացման ցանցերի տեղադրումը՝ բացառությամբ գերեզմանատան կարիքների համար տեղադրվողների:
19. Գերեզմանատների տեղափոխման դեպքում չի թույլատրվում դրանց զբաղեցրած հողատարածքներն օգտագործել գյուղատնտեսական նպատակների համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 5
ՀՀ Լոռու մարզի Թումանյն համայնքի ղեկավարի
2025թվականի օգոստոսի 29 -ի թիվ 297-Ա որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ
ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ

1. Սույն կանոններով սահմանվում են գերեզմանատներից օգտվելու կանոնները:
2. Հուղարկավորությունը գերեզմանատներում կատարվում են ամեն օր, ժամը 10.00-18.00-ն: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տոնական ոչ աշխատանքային օրերին, որպես կանոն, հուղարկավորություն չի իրականացվում:
3. Գերեզմանատներն այցելուների համար բաց են ամեն օր, ժամը 9.00-20.00-ն:
4. Գերեզմանատան տնօրինությանը հուղարկավորություն կատարելու մասին տեղեկացվում է մեկ օր առաջ:
5. Հուղարկավորության կազմակերպումն ստանձնողը (մահացածի հարազատները, մտերիմները) իրավունք ունեն իրենց պատկանող գերեզմանի սահմաններում կատարելու գերեզմանների, գերեզմանատեղերի բարեկարգման և տապանաքարերի, մահարձանների տեղադրման աշխատանքներ՝ համաձայնեցնելով գերեզմանատան տնօրինության հետ: Նշված աշխատանքների կատարումը չպետք է վնաս պատճառի այլ գերեզմանների, գերեզմանատան կառույցների: Պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով:
6. Սույն կանոնների 5-րդ կետում նշված շինարարական աշխատանքները կատարելու համար գերեզմանատան տարածք մեքենաների (մեխանիզմների) մուտքը չի արգելվում:
7. Այցելուները պարտավոր են չաղտոտել գերեզմանատան տարածքը և պահպանել մաքրություն: Այցելուները պարտավոր են ծիսակատարությունների և գերեզմանների խնամքի արդյունքում առաջացած աղբը տեղադրել գերեզմանատան տնօրինության կողմից հատուկ հատկացված տեղերում: Շինարարական աշխատանքների հետևանքով առաջացած թափոնները հավաքվում և տեղափոխվում են շինարարություն իրականացնող պատասխանատու անձի կողմից:
8. Գերեզմանների ոչնչացման, պղծման, դրանցում ամրակայված կառույցներին վնաս պատճառելու դեպքում մեղավորները ենթակա են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 6
ՀՀ Լոռու մարզի Թումանյն համայնքի ղեկավարի
2025թվականի օգոստոսի 29 -ի թիվ 297-Ա որոշման

ԿԱՐԳ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար, բացի օրենքով նախատեսված՝ անվճար հիմունքներով տրամադրվող հողատարածքից, վճարովի հիմունքներով լրացուցիչ տարածք տրամադրելու հետ կապված գործընթացները:
2. Ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար վճարովի տարածք հատկացվում է չորսից ավելի անդամ ունեցող ընտանիքներին՝ միայն որպես գերեզմանատեղ օգտագործելու իրավունքով: Վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի առավելագույն չափը սահմանվում է 6,0 քառ. մետր:
3. Վճարովի հողատարածքը հատկացվում է բաց գերեզմանատներում հերթական թաղում իրականացնելու ժամանակ գոյություն ունեցող գերեզմանին կից ազատ տարածքի առկայության դեպքում և նոր ընտանեկան գերեզման հատկացնելու դեպքում՝ ըստ գերեզմանատան հողերի օգտագործման հաստատված հատակագծի (սխեմայի) և թաղումների հերթականության:
4. Արգելվում է վճարովի հողատարածքների հատկացումը մասնակի փակ գերեզմանատներում:
5. Գոյություն ունեցող գերեզմանին կից վճարովի հողատարածքի հատկացումը չպետք է խախտի գերեզմանատան հողերի օգտագործման հատակագիծը (սխեման) և խոչընդոտի հարևան գերեզմանների ու անցումների օգտագործումը:
6. Բաց կամ նոր կազմավորվող գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծում (սխեմայում), ելնելով տեղական պայմաններից, կարող են նախատեսվել առանձին հատվածներ (ծառուղիներ)՝ ընտանեկան գերեզմանների կազմավորման համար, ներառյալ վճարովի հողատարածքները:
7. Գերեզմանատան տնօրինությունը վճարովի տարածքը հատկացնում է հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի դիմումի և մահացածի ընտանիքի անդամների կազմի մասին համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:
8. Վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի արժեքը որոշում է համայնքի ղեկավարը՝ օրենքով սահմանված կարգով, ըստ տվյալ գոտու համար սահմանված տարածագնահատման գոտիականության գործակիցների:
9. Հատկացված հողատարածքի արժեքը վճարվում է համայնքի բյուջե, կատարված վճարման դիմաց տրվում է անդորրագիր: Ստացված միջոցներն օգտագործվում են գերեզմանատների պահպանման ու շահագործման համար:
10. Գերեզմանատան տնօրինությունը վճարման անդորրագրի հիման վրա համապատասխան նշում է կատարում գերեզմանատան հողերի օգտագործման հատակագծում (սխեմայում) և գրանցում գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառման ու թաղումների գրանցման մատյանում և գերեզմանի վկայականում:
11. Գերեզմանատան տնօրինության ներկայացուցիչը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի հետ տեղում նախանշում է վճարովի հողատարածքի տեղը, չափերը և սահմանասյուներով նշում գերեզմանի սահմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 7
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի
2025թվականի օգոստոսի 29 -ի թիվ 297-Ա որոշման

ԿԱՐԳ
ՎԵՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են վերահուղարկավորման հետ կապված գործընթացները:
2. Հուղարկավորության կազմակերպումը ստանձնած անձի ցանկությամբ և գերեզման օգտագործողի համաձայնությամբ՝ մահացածի վերահուղարկավորումը (գերեզմանից այլ գերեզման տեղափոխելը) իրականացվում է թաղումից առնվազն երեք տարի հետո, բացառությամբ սույն հավելվածի 2.1-ին կետով նախատեսված դեպքի՝ մահացածի հարազատների միջոցների հաշվին:
2.1. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով մահացած և հուղարկավորված, ինչպես նաև գերեզմանատան կազմակերպման համար նախատեսված վայրերից դուրս հուղարկավորված անձանց միայն առաջին անգամ վերահուղարկավորում իրականացնելու դեպքում ժամկետային սահմանափակումներ չեն գործում:
3. Վերահուղարկավորումը թույլատրում է գերեզմանատան տնօրինությունը՝ հուղարկավորության կազմակերպումը ստանձնած անձի դիմումի և գերեզման օգտագործողի գրավոր համաձայնության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրված վերահուղարկավորում իրականացնելու հնարավորության վերաբերյալ եզրակացության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության համաձայնության հիման վրա:
Մահացածի հուղարկավորության կազմակերպումը ստանձնած անձն այլ բնակավայրի գերեզմանատուն տեղափոխելու դեպքում ներկայացնում է նաև տվյալ բնակավայրի գերեզմանատան տնօրինության թույլտվությունը:
4. Մահացածի աճյունը (աճյունի մնացորդները) գերեզմանից հանվում է ցերեկային ժամերին, գերեզմանատան տնօրինության ու Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ներկայացուցիչների պարտադիր ներկայությամբ, ինչպես նաև ոստիկանության ներկայացուցչի մասնակցությամբ:
5. Մահացածի աճյունը (աճյունի մնացորդները) գերեզմանից հանելուց հետո գերեզմանատան տնօրինության կողմից գերեզմանահորն անմիջապես ախտահանվում է, լցվում հողով, և տեղը հարթեցվում է:
6. Հանված աճյունը (աճյունի մնացորդները) փաթաթվում է բամբակյա կտորով և տեղադրվում պոլիէթիլենային պարկի մեջ, որից հետո տեղադրվում է փայտյա արկղի կամ դագաղի մեջ և տեղափոխվում նոր գերեզման: Նոր գերեզմանում թաղելուց առաջ աճյունը (աճյունի մնացորդները) հանվում է պոլիէթիլենային պարկից:
7. Նախկին և նոր գերեզմանների գերեզմանատների տնօրինությունները վերահուղարկավորման մասին գրանցումներ են կատարում թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյաններում ու գերեզմանների վկայականներում:
8. Գերեզմանատների տեղափոխման դեպքում վերահուղարկավորումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով և այդ դեպքերի համար նախատեսված միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ